

վերադառնալ երկիր եւ հաւաքել սարերու ու ձորերու ապաստանած փախստականներն ու հոփուել զանոնք: Իւր հնարագիտութիւններով յաջողեցաւ Մելքիսեղեկ շահիլ իրեն Ամիրզունա Խանին բարեկամութիւնը, ուսկից օգտուեցաւ նաեւ վերապրած ժողովուրդը: Այս տեղ երեւան բերաւ Մելքիսեղեկ քաջասրտութիւն մը, որուն վրայ պէտք է հիանանք: Չունէր անիկա հրաշագործ ոյժը, ամայութեան մէջ վարդ բուսցնելու. բայց պահանջեց Ազգը իրմէ ծաղիկներ: Տժգոհ էին իրմէ մահաւանդ Ջուղայեցիք:

Այս տժգոհութեան պատճառը պէտք է փնտռել նախապատերազմեան շրջանին:

Էջմիածին 46·000 զուրուշի պարտքի տակ էր. թանկագին սպաները գրաւ դրուած այլազգիներու քով. այս պարտքը «ոչ էր ի հարկապահանջութենէ թագաւորաց կամ իշխանաց» կը գրէ Դարանաղցի, «այլ ի հակառակութենէ ի միմեանս անկանելով, յափըշտակել ջանալով զկաթողիկոսութիւնն, կաշոռս խոստանային անօրինաց ձեռագիր կնքեալ նամակով... ով որ զապուլ արար, նա նստելով յաթոռ» (էջ 54): Նկարագրելով կաթողիկոսներու կենցաղը կը գրէ նոյն հեղինակը. «Եւ առնէին բազում ապականութիւնս եւ նեխութիւնս եւ անկարգութիւնս իւրեանքն եւ իւրեանց չար առաքեալ նուիրակքն ընդ ամենայն աշխարհն Հայոց»:

Ճնշուած այս պարտքերու տակ եւ նե-